ՏԱՐԵԼԻՑ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետի մահվան առաջին տարելիցի առթիվ, մատուցվեց ս. պատարագ՝ ձեռամբ Հռիփսիմե վանքի վանահայր Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

Հավարտ ս. պատարագի Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկաներին իր պատգամը հղեց՝ որպես խոսք հիշատակի և երախտիքի:

Ավարտելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբան Հայրերով և հավատացյալ ժողովրդով, երանաշնորհ Հայրապետի տապանաքարի առաջ կատարեց կարգ հոգեհանգստյան:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Սփյուռքից ժամանած հյուրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Արարողություններից հետո Վեհարանում տեղի ունեցավ հոգեճաշ, որին մասնակցեցին պետական դեմքեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և միաբան Հայրեր: